

Ս Ա Ր Յ Ա Ն Ը
Ի Ս Ա Ն Ա Կ Յ Ա Ն Ի Ն



Տ Ա Ր Զ Յ Ո
Ի Տ Ա Ա Կ Յ Ո



Մ. ՍԱՐՅԱՆ և Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ, 1955
M. САРЬЯН и АВ. ИСААКЯН, 1955

Շապիկի վրա՝

Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՐԱԳԱԾ. 1925. կտ. յուղ. 111 × 107 սմ.

Մ. Սարյանի թանգարան

На обложке:

М. САРЬЯН. АРАГАЦ. 1925. х. м. 111 × 107 см.

Музей М. Сарьяна

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1975
ИЗДАТЕЛЬСТВО «АЙАСТАН», ЕРЕВАН, 1975



Մ. Սարյան. Ավ. Բասահյան. 1929 թ. Մ. Սարյանի թանգարան
М. Сарьян. Ав. Исаакян. 1929 г. Музей М. Сарьяна

...Ամեն ազգ իր ձևով, ոճով, իր կերպով հոգեդրսևորում ունի, մարմնացում իր ապրումների ու մտածումների, իր տեսիլների և իրեն հատուկ աշխարհապատկերման:

Նկարիչ Սարյանը գիտակցաբար և բնազդաբար, գեղարվեստի այս ըմբռնումով մոտեցել է իր գործին և տարիներ, ճիգ ու ջանքով ուսումնասիրել է Հայաստանի և Արևելքի գույներն ու ձևերը և մասնավորապես մեր մանրանկարչությունը, դարերի թանկ այս ժառանգությունը... Եվ այս նյութերից ստեղծել է իր արվեստը՝ միանգամայն գուտ հայկական, տոհմիկ: Եվ այսպիսով նա գիտականորեն հիմն է դնում մեր նկարչական արվեստին կամ ավելի ուղիղը՝ վերագարթեցնում ու զարգացնում է հինը, որովհետև նրա նոր արվեստի տարրերը, ապրում են դարերի խորքում՝ մայր հողի վրա:

Սարյանի կյանքն ու արվեստը սերտորեն շաղկապված են իրար հետ, և ուրիշ կերպ չէր կարող լինել. իսկական արվեստը իսկական արվեստագետի հոգու առարկայացումն է, նրա սիմվոլ պատկերը:

Երբ նայում եք նրա նկարներին, մի անհուն սիրով ու կարոտով լցվում է ձեր հոգին դեպի հայ աշխարհը՝ «արևի տակ պարզված հեքիաթ», մի խորին քնարերգություն, իր չքնաղ լեռներով ու գետերով, արտերով ու եղնիկներով, պաշտելի հայ գյուղացիով և իր նվիրական գութանով... Եվ մտածում եք, ինչքան է սիրում հեղինակը այս երկիրն ու նրա ներկողին, ինչքան շատ, որ նույն բուխ զգացումով է վարակում ձեզ: Երբ մոտենում

էք նքան, ծանոթանում էք նրա մտքերի ու զգացումների հետ, դուք տեսնում էք, որ իրավ, այդ նկարները նրա հոգուց են բխել. այդ նկարների նախատիպերը, Հայաստանը, գուրգուրված, սիրված են նրա հոգում այնքան կաթոզին, այնքան գեղեցիկ...

Նկարիչ Սարյանը արվեստով ու կյանքով նվիրված է Հայաստանի վերածննդին ու վերաշինմանը, դարերի աղետների մեջ փշրված մեր ժողովրդի ազգայնացմանն ու հայացմանը...

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ. 1924 թ., Վենետիկ

Երկու մեծանուն Վարպետների բարեկամությունը սկսվում է մեր դարի առաջին թվականներից: Այդ առթիվ «Գրառումներ իմ կյանքից» գրքում Սարյանը գրում է. «Իմ ճամփորդությունները Հայաստանում սովորույթ դարձան: 1903-ի ամռանը Միանսարյանի հետ նորից եկանք հայրենիք: Եղանք Ալեքսանդրապոլում, կարմիր ե սև տուֆից կառուցված այդ քաղաքում: Այստեղ էլ ծանոթացա Ավ. Իսահակյանի հետ: Հանդիպումը թռուցիկ էր: Քսան տարի հետո նորից հանդիպեցինք...»:

1924-ի գարնանը Վենետիկի կերպարվեստի միջազգային ցուցահանդեսին մասնակցելու առնչությամբ Սարյանը մեկնում է Իտալիա: «Մի անգամ սբ. Մարկոսի հրապարակում մենակ թրևելուց հետո մտա սրճարաններից մեկը և նկատեցի շատ ծանոթ մի դեմք: Ավետիք Իսահակյանն էր...

Վենետիկում, նա գրեթե բոլորին ճանաչում էր և ինձ ծանոթացրեց նրանց հետ: Բայց բոլորից հետաքրքիրը ինքն էր՝ հանճարեղ բանաստեղծը: Եվ հենց Վենետիկում էլ սկսվեց մեր ընկերությունը: Ամեն կերպ աշխատում էր, որ լավ զգայի: Ինքն էլ լավ էր զգում ինձ հետ, և, կարծես, ինձնից առնում էր հայրենիքի կարոտը: Ոգևորված խոսում էր ազգային կուլտուրայի դարավոր ավանդների պահպանման ու զարգացման մասին: Իրեն հատուկ խոհունակությամբ խնդիրներ էր առաջ քաշում, հուզվում, կշռադատում: Մի խոսքով, օտար երկնքի տակ էր ապրում, բայց հոգով հայրենիքում էր՝ Մանթաշի, Արարատի, Արագածի և Արաքսի, իր այնքան սիրած ժողովրդի հետ: Պիտի տեսնեիք, թե ինչ հուզմունքով էր դիտում իմ նկարները և ինչպես էր հանդավառվում, երբ նրանք դուր էին գալիս նաև օտարներին: Ուրախանում էր երեխայի պես և հպարտանում իմաստունի նման: Եվ կիսեց իր հայրենասիրական ապրումները հայ ընթերցողի հետ իմ մեծ, հմայիչ, անչափ հմայիչ ընկերը՝ Ավոն»:

Իսահակյանի հողվածը Սարյանի ցուցադրած պատկերների մասին, մեծ նկարչի ստեղծագործության բուն էությունը, նրա դերն ու նշանակությունը բացահայտող առաջին և լավագույն հողվածներից է, գրված հայ մտավորականի կողմից:

Բանաստեղծն ու նկարիչը այնուհետև ամեն օր հանդիպեցին, կապվեցին նրանց սրտերը, իրար մեջ իրենց գտան, իսկ երբ նկարիչը մեկնեց հայրենիք, նրանց հանդիպումները «շարունակվեցին» նամակներով:

12 օգոստոս 1924. Միրելի Ավետիք... Դու չես բարկանա, եթե ես քեզ այսպես դիմեմ... Գնացքը մեկնեց ձեր աչքի առաջ և այժմ ահագին տարածություն կա մեր մեջ... Այստեղ շարունակ պատմում եմ Իտալիայի հրաշալիքների մասին... Երևանի արևը տաք է արդեն, խաղողը սկսել է հասունանալ... 31 օգոստոսի 1924. Եթե դու ռեալ քայլերի դիմես Հայաստան վերադառնալու թե ժամանակավորապես, թե ընդմիջտ, ամեն կերպ և ամեն միջոցներով քեզ կաջակցեն... Բարևները, որ գրել էիր տետրակիս մեջ, բաժանում եմ...

28 սեպտեմբեր 1924. Միրելի Մարտիրոս ջան... Շնորհակալությամբ ստացել եմ բոլոր նամակներդ՝ Բեռլինից, Մոսկվայից և քաղցր Երևանից... Կարդացի մեծ ուրախությամբ Շիրակի ջրանցքի բացման մասին. մեծ գործ է... Միրելիս, ազնիվ Մարտիրոս, դու

բավական ուսումնասիրեցիր խարակտերս, որը անգուսպ է, անհավասար, և պիտի ներես, որովհետև վերջի վերջո հիվանդ մարդ եմ, — տեսնել հայկական աղետը և առողջ մնալ անկարելի է... 9 դեկտեմբեր 1924. Մենք կանք, ինչպես որ թողիր, մի օր ուրախ, չորս օր տխուր, ձանձրացած, անպայման ինձ ձգելու եմ Երևան... 12 նոյեմբեր 1924. Ես մտածում եմ գարնանը գալ... Ամեն ինչ լավ է գնում Հայաստանում (Երևանից եկած թերթերը կարդում եմ), միայն մի բան է գեշ, — ուղղագրությունը աշխատեցեք փոխել... Շատ կխնդրեի իմ անունով ուղարկեք գրքերը վանքին (Մխիթարյաններին) հանձնելու համար, որպեսզի առաջ ես կարդամ...

18 դեկտեմբեր 1924. Շատ սիրելի Ավետիք... քո ուղարկած լուսանկարները, կատալոգը, Վենետիկի այբոմները ստացա մեծ շնորհակալությամբ... «Կարմիր արև» դասագրքերը Մոսկվանը կարգադրեց Պետհրատի վարիչին, որ ուղարկեն քեզ: Ստ. Ջորյանը խոստացավ յուր «Ցանկապատը» ուղարկել, նույնը Վ. Թոթովենցը յուր «Մեղքոսի» վերաբերյալ, իսկ Դերենիկը՝ «Քաջ Նազարը» առանձին գրքով:

Ուրեմն այդպես, Ավետիք ջան, եթե Երևանում բնակարանային կրիզիս չլիներ, ես կասեի, որ անմիջապես արի Երևան: Որովհետև բացի քեզանից հայ ժողովրդի հարագատ մտավորականությունը այստեղ է: Իհարկե, քեզ համար տեղ կգտնվի, բայց ես կարծում եմ, որ մինչև այս հարցը չլուծվի գոնե փոքր չափով՝ չպետք է գաս, որովհետև քո հասակում ուսանողական կյանք վարելը դժվար կլինի... Շատ եմ հիշում մեր Վենետիկի կյանքը և Իտալիո արվեստի հրաշալիքները, Ռենեսանսի աստվածային շրջանը և մեր ժամանակների անգունությունը արվեստի ասպարեզում...

18 դեկտեմբեր 1924. Սիրելի Մարտիրոս... Մի տաս օր առաջ ծանոթացա գերմանացի նկարիչ Ջաստների հետ... Խոսք բացի քո նկարների մասին, շատ գովեստներով խոսեց և ասաց, եթե Հայաստանը այդպիսի արև ու գույներ ունի, այդպիսի լեռներ, ուրեմն շատ գեղեցիկ երկիր է... Մենք լավ ենք, առողջ ենք, ես պարապում եմ, որ վերջացնեմ վեպս և Հայաստան գամ, գրել եմ, բայց պատասխան չունեմ դեռ... Եթե այս տարի (1925) չհաջողվի ինձ Հայաստան, Երևան գալ, պիտի երթամ Իսպանիա, իսկ եթե 1926-ին էլ չհաջողվի գալ, էլ չեմ գա, գերեզմանիս համար հող կառնեմ և կսպասեմ մեռնելու օրիս... Նամակս կհասնի երևի նոր տարվան ձեռքդ: Ուրեմն շնորհավորում եմ... Աստված տա (ձև է խոսքի) նոր տարվա մեջ իրար տեսնենք հայրենիքի հողի վրա:

2 փետրվար 1925. Սիրելի Ավետիք... Ինչպես գիտես մեզ մոտ կյանքը մեծ թափով առաջ է գնում, աշխատողի համար գործ շատ կա, ճիշտ է հարմարությունները քիչ են: Երևանում կոմֆորտով ապրելու հնարավորություն չկա, հենց դրա համար էլ Ա. Թամանյանի Երևանի նոր կազմած նախագծով գարնանից սկսվելու են կառուցվել նոր շենքեր, իհարկե, բոլոր հարմարություններով, համենայն դեպս այդ շենքերը կլինեն ավելի գեղեցիկ և հարմար, քան թե այն բոլոր շենքերը, որ հայ բուրժուազիան շինել է Թիֆլիսում, Բաքվում, Արմավիրում, Ռոստովում և մի շարք քաղաքներում Հայաստանից դուրս...

22 ապրիլ 1925. Սիրելի Մարտիրոս... Շատ ժամանակ է, որ նամակդ ստացել եմ, բայց ներող եղիր սիրելիս, որ մինչև այսօր չեմ պատասխանել: Տխուր եմ շատ, սրտաբեկ, անտրամադիր, այսպես գնաց մեր սերունդի կյանքը: Վերջապես այսօր գրում եմ քեզ, Երևանը ծաղկել է հիմա, գուցե կեռասը հասել, Արարատյան դաշտը կանաչին է տալիս, լեռներից իջնում են գարնան հորդ ջրերը և Ալեքսանդր Մյասնիկյանը չկա... Ամենաանկեղծ զգացումով ցավում եմ նրա կորուստը... Ափսոս, անհուն ափսոս, ինչ կարճ կյանք ունեցավ և ինչ մեծ գործ կատարեց: Անձնապես ցավ եմ զգում, որ Հայաստան գալով երջանկությունը չպիտի ունենամ նրան տեսնելու...

Սիրելի Մարտիրոս, մարտ ամսին այստեղ էր Ե. Չարենցը, ամեն օր միասին էինք, շատ-քիչ կովեցինք, միշտ արիշ-բարիշ էինք, հաշտ ու սիրով... նրան լավ տղա գտա, ընկերական սիրտ ունի, դարդիման է... Առաջին շրջանի գործերը նրա կարդացի, գեղեցիկ բաներ են, տաղանդավոր է... Տարիքից ավելի զարգացում ունի և կարդացած ու կարդալ սիրող տղա է, շատ առաջ կգնա:

22 ապրիլ 1925^{*}. Շատ սիրելի Ավետիք. դժբախտ լուրը Ալ. Մարտունու (Մյասնիկյանի) մասին, իհարկե քեզ հասավ: Դա շատ մեծ կորուստ էր Խորհրդային Հայաստանին և Անդրկովկասյան Միության... Իհարկե, կյանքը գնում է առաջ, նոր մարդիկ կգան ապարեզ, բայց կորուստը շատ մեծ էր և անփոխարինելի:

Մխիթարականն այն է, որ երկիրը վերակենդանանում է, աշխատասեր և տոկուն հայ ժողովուրդը յուր շինարարական աշխատանքին է նվիրվել, ուրեմն տխրել չպիտի...

26 մայիս 1925. Շատ սիրելի Մարտիրոս... Ես լավ եմ, բայց տխուր եմ, ինչ պիտի լինի օտար երկրում ապրող հայ մարդու կյանքը, ոչ այս ենք, ոչ այն, քաշ ենք գալիս... Լսում եմ, որ այս տարի մեր հայրենիքի բերքը գեշ է, մրսել են ցանքերն ու այգիները, սով չլինի ի սեր աստծու...

25 հունիս 1925. Սիրելի Ավետիք. ուղարկում եմ քեզ այս օրերս լույս տեսած «Նորքի» վերջին համարը, որ բավականին բովանդակալից է և հետաքրքրական: Ի միջի այլոց, իմ գրական ստեղծագործությունս էլ կա մեջը: Քեզ համար գուցե նորություն չեն իմ գրածներս, բայց էլի մի բան է... Երևանը հիասքանչ է, դեռ շոգերը չեն ընկել...

28 հուլիս 1925. Սիրելի Մարտիրոս. Հաճությամբ կարդացի գրածդ հոդվածը, շնորհակալություն ինձ նվիրած տողերը համար:

«Քաջ Նազարից» մի կտոր կարդացի և համը բերանս մնաց. սքանչելի բան էր: Կեցցե Դերենիկը: Ուրախությամբ կարդացի Մոսկվայում տարած քո հաջողության մասին... Գրում ես, որ մյուս տարի գալու ես Իտալիա, ողջ մնանք, նորից տեսնենք իրար... Միշտ հիշում եմ քեզ... Իսկ մյուս տարի հետո կդառնամ Երևան, այլևս անկարող եմ սպասել, հոգիս ելավ օտարության մեջ:

Մայր երկրի համն ու հոտը ներծծած մեր Վարպետները իրենց անձը չեն պատկերացրել հայրենիքից դուրս, ուրիշ «դարդ ու ուրախություն» չեն ունեցել: Դրա մի վկայությունն է հետևյալը: Սարյանը, որ երկրագնդի ամեն մի անկյունում կարող էր նկարելու նյութ գտնել, պահպանելով սեփական ոճն ու իր արվեստի խորհուրդը, մեկուկես տարի ապրելով Փարիզում և աշխատելու ժամանակ ունենալով, բացի տեղում նկարած մի քանի էտյուդներից, պանդուխտ բանաստեղծի նման, շարունակել է «երգել» հայրենի բնաշխարհի գեղեցկությունը, ստեղծել մի ամբողջ շարք բնանկարներ: Միայն պիտի ցավել, որ Փարիզում կազմակերպված ցուցահանդեսից հետո, նկարչի այդ գործերը հրդեհի զոհ գնացին նավի վրա, տունդարձի ճանապարհին:

1926-ի աշնանը, երբ Իսահակյանը գալիս է Երևան, Սարյանն արդեն մեկնել էր Փարիզ: 1928-ի զարնանը բարեկամները իրար գտնում են հարազատ հողի վրա և, հետզհետե սկսվում է ծնվել Սարյանի արվեստի իսահակյանական շարքը, որ նշանակալից տեղ ունի նկարչի ստեղծագործության մեջ:

Այս ալբոմում զետեղվել են Սարյանի սքանչելի բնանկարներից երկուսը: «Արագածը» (շապիկի վրա), որքանով Հայաստանի հավաքական կերպարն է, «արևի տակ պարզված հեքիաթը», նույնքանով դիտողի առջև բացում է բանաստեղծի ներշնչումների

* Բանաստեղծն ու նկարիչը միևնույն օրն են իրար արձագանքել Ալ. Մյասնիկյանի ողբերգական մահվանը:

ակունքը, նրա հոգին՝ Շիրակը: Երկրորդը՝ «Հայաստանի սարերում» նույնպես տոգորված է իսահակյանական շնչով:

Եղնիկները լուսաբացին
Մուր ժեռերով անցկեցան,
Փրփրած լճին մեղմ նայեցին
Լռիկ-մնջիկ անցկեցան:

Սարյանի «Հայաստանի սարերում» նկարի հետ արվեստասերը ծանոթանում է առաջին անգամ: Փարիզում նկարված այս գործը, հեղինակը նվիրել է հայ բարեկամներից մեկին, իսկ այժմ գտնվում է Նյու-Յորքում:

1929-ին ստեղծվում է Սարյանի գրաֆիկական արվեստի լավագույն նմուշներից մեկը՝ Իսահակյանի բանաստեղծությունների ժողովածուի շապիկը: Իրար հակված երկու ուռենիների միջով բացվում է լույսով ողողված Արագածը, որի ստորոտին խաղաղ ծխում է հայկական գյուղը: Հայաստանը՝ բանաստեղծի ու նկարչի աշխարհը, մարմնավորվել է այստեղ իր վեհ գեղեցկությամբ ու կուսական մաքրությամբ:

1929-ի դեկտեմբերի 31-ին, 1930-ի հունվարի 1-ին և 3-ին բարեկամները հանդիպել են միմյանց: Հայ ժողովուրդը թնակոխում էր իր նոր կյանքի տասներորդ տարին: Նոր տարվա շնորհավորանքների հետ մեկտեղ ծնվում են բանաստեղծի կերպարը խտացնող երեք դիմանկար-գծանկարներ, որոնք հաջորդ տասնամյակներին տպագրվում են Իսահակյանի ժողովածուներում և մամուլում:

Իսահակյանի արտասահմանից վերջնական վերադարձից մեկ տարի առաջ, 1935-ին, Սարյանը նկարագարում է հռչակավոր «Աբու-Լալա Սահարին»: Հայտնի են միայն այդ նկարագարուման երեք թերթեր, որոնք Մ. Սարյանի թանգարանի կողմից վերջերս են ձեռք բերվել Թբիլիսիից: Դրանք աչքի են ընկնում նկարչի արվեստին հատուկ գունային հակադիր անցումների միջոցով լուսային մթնոլորտի շեշտմամբ ու աշխույժ, կենդանի շնչով:

1940-ին Սարյանը ստեղծում է մեծ բանաստեղծի հանրահայտ յուղաներկ դիմանկարը: Նույն թվին, ըստ Լուսիկ Սարյանի վկայության, նկարիչը կատարում է երկու տասնյակից ավելի նկարագարումներ Մոսկվայում հրատարակվող Իսահակյանի ռուսերեն ժողովածուի համար: 1941-ին դրանք հանձնվում են Պետական հրատարակչությանը: Սակայն, սկսված պատերազմի պատճառով ժողովածուն լույս չի տեսնում, իսկ նկարագարումները, ինչպես հետո պարզվում է, կորչում են:

1950-ից հետո, իրենց ութերորդ տասնամյակը ապրող Վարպետների հանդիպումներն ու զրույցները դառնում են ավելի գորովալից: Նրանք հաճախ են տեսնում միմյանց մերթ սեփական հարկի տակ, մերթ Թումանյանների տանը, մերթ գիտությունների ակադեմիայում, կամ զանազան հավաքույթներում: Նկարչական տեսքը միշտ մոտը պահող Սարյանի աչքից չի վրիպել ընկերը: Գծանկարներ կատարելով Իսահակյանից, նկարիչն ասես «զրուցել» է նրա հետ: Ալբոմում ընթերցողը կծանոթանա այդ ճեպանկարների մի մասին:

Բանաստեղծն էլ իր հերթին, տարբեր առիթներով ծոցատեսքում գրի է առել ահա այսպիսի մտքեր. «Նա ինքնատիպ նկարիչ է, մեծ նկարիչ... Նրա վրձինը միակ ի վիճակի է ներկայացնել Հայաստանը, երկրի հոգին... անդորր, վեհ, վսեմ, բիրիական երկիրը: Նրա շնորհիվ միայն զգում ես մեր աստվածաշնչային երկիրը, լեռները, հողը, մարդիկ...»: «Երբ լինում ես մի ուրիշ երկիր, լավ ըմբռնելու ու գրելու համար, պիտի զգաս նրան՝ մի տեսակ երկրագագում... օրինակ, Մ. Սարյանը զգում է Հայաստանը և տվել է

ապրած, զգացած պեյզաժներ: Հայրենազգացում... Սարյանի նկարների մեջ կենտրոնացած է Հայաստանի պատկերը, համադրված է, հանգունակված»: «Ինչքան էլ մարդ տխուր լինի, երբ նայի Մարտիրոս Սարյանի նկարներին, նրա վառվռուն գույներին կուրախանա»:

1955-ին, հայ ժողովուրդը տոնում էր իր Վարպետների ծննդյան 80 և 75-ամյակները: Ավագը կրտսեր ընկերոջ մասին գրում է՝ «Սարյանն ամբողջ աշխարհին է», իսկ կրրտսերը՝ «Հավերժ ժողովրդի հետ» հողվածները: Իսահակյանի ծննդյան օրը, Սարյանը նվիրելու նպատակով երկու նկար և ներկատուփը առած գնում է ընկերոջ տուն: Այդ առթիվ նկարիչը պատմում էր: «Շատ մարդ էր հավաքված: Եկել էին նաև կինոաշխատողներ: Ավետիքը համառորեն չուզեց նկարահանվել, գլուխը դարձրեց ու անշարժ նստեց: Ես էլ օգտվելով առիթից, ճիշտ այդ դիրքով՝ ինքն իր մեջ ամփոփված, նկարեցի նրան»:

1957-ին, մեծ բանաստեղծի մահվան տարին, Սարյանը կատարում է, իր բնութագրմամբ՝ «բնության հազվագյուտ գլուխգործոցներից մեկի», գույնի նուրբ զգացողությամբ և մտերմիկ տրամադրությամբ տոգորված մի դիմանկար ևս (ջրաներկ): Իսկ 1962-ի փետրվարի 28-ին, նկարիչն իր ծննդյան տարեդարձի օրը, Իսահակյանի ընտանիքից նվեր է ստանում մի ալբոմ, որ բանաստեղծը ժամանակին գնած է եղել իր համար: Ալբոմի առաջին էջում Սարյանը գրել է. «Կաշխատեմ լցնել այս տետրը նկարներով, նվիրելով Ավետիքի պայծառ հիշատակին»: Հաջորդ էջում Սարյանը հիշողությամբ նկարում է Իսահակյանին, գլուխը ափի մեջ, մտախոհ, հայացքը՝ հայրենի լեռներին:

Հիմա չկան մեր Վարպետները: Մեզ է ժառանգված նրանց խոր հայրենասիրական արվեստն ու նույն զգացմունքներով կոփված նրանց մեծ բարեկամությունը, իբրև փոխադարձ սիրո, հարգանքի ու ազնիվ մարդկայնության ուսանելի օրինակ:

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Մ. Սարյան. Ավ. Իսահակյան և Ալ. Թամանյան. 1929. Ա. Կարինյանի սեփ.
М. Сарьян. Ав. Исаакян и Ал. Таманян. 1929. Собр. А. Кариняна

Искусство каждой нации своей формой, стилем, характером отражает переживания, думы, чаяния, мировосприятие народа.

Художник Сарьян сознательно и интуитивно, именно так понимая искусство, годами, упорно и вдумчиво изучал краски и формы Армении и Востока и особенно армянскую книжную миниатюру — бесценное наследие минувших веков... На этих истоках зиждется его глубоко национальное творчество. Благодаря этому он создает целую школу в армянской живописи, основанную на научной почве, или вернее, пробуждает и развивает старое, так как элементы этого нового искусства берут свое начало из глубины веков...

Жизнь и искусство М. Сарьяна тесно связаны друг с другом, иначе и быть не могло: настоящее искусство является обобщением сущности настоящего художника, его символическим портретом.

Когда вы смотрите его картины, душа ваша наполняется безграничной любовью к «открывающейся под солнцем сказке» — родной земле с ее чудесными горами и реками, с оленями, пасущимися на склонах гор, с цветущими полями и заветным плугом пахаря... И вы невольно думаете о том, насколько же безгранично любит художник эту землю и ее пахаря, что заражает тем же чувством и вас. Когда же вы ближе знакомитесь с его мыслями и чувствами, вы видите, что эти картины в самом деле — отзвук его души. Прототипы этих картин любовно взлелеяны в его душе, — так они жизненны, так прекрасны!..

Художник Сарьян своим творчеством и своей жизнью предан делу возрождения Армении, ее новому строительству, достижению вековых чаяний нашего пострадавшего народа.

Ав. ИСААКЯН. 1924 г. Венеция

Дружба двух великих Варпетов родилась в первых годах нашего столетия. По этому поводу в книге «Из моей жизни» Сарьян пишет: «Мои путешествия по Армении стали привычкой. Летом 1903-го вместе с Миансаряном снова приехали на родину. Побывали в Александрополе, городе, построенном из красного и черного туфа. Здесь я познакомился с Ав. Исаакяном. Встреча была мимолетной. Спустя двадцать лет мы встретились снова...»

Весной 1924-го для участия в Венецианской международной выставке изобразительного искусства Сарьян уезжает в Италию. «Однажды, гуляя в одиночестве по площади св. Марка, я зашел в одно из кафе и увидел очень знакомое лицо. Это был Аветик Исаакян...

В Венеции он был знаком почти со всеми и меня со многими перезнакомил. Но интереснее всех был он сам — великий поэт. И именно в Венеции началась наша дружба. Он очень старался, чтобы я чувствовал себя хорошо. И ему было интересно со мной, казалось, мое общество несколько утоляет его тоску по родине. Воодушевленно он говорил о сохранении и развитии традиций многовековой национальной культуры, с присущей ему вдумчивостью выдвигал новые проблемы, волновался, размышлял. Он жил под чужим небом, но душой был на родине, с ее горами и реками — Араратом, Арагацем, Манташем, Араксом — со своим горячо любимым народом. Надо было видеть, с каким волнением он рассматривал мои картины и как радовался, если они нравились и другим. Радовался «как ребенок и гордился» как мудрец. Свои патриотические переживания он разделил с армянским читателем. Таким был мой большой, обаятельный, безмерно обаятельный друг — Аво».

Статья Исаакяна о картинах Сарьяна, раскрывающая истинную сущность творчества большого художника, его роль и значение, была первой и одной из лучших статей, написанных армянским интеллигентом о Сарьяне.

Поэт и художник стали встречаться ежедневно. Их сердечная привязанность вылилась в большую дружбу, а когда художник уехал на родину, друзья продолжили свои «встречи» в письмах.

12 августа 1924 г. Дорогой Аветик... Не сердись, если я буду так тебя называть... Мой поезд ушел у вас на глазах, и сейчас между нами огромное расстояние. Здесь я без конца рассказываю о чудесах Италии... Ереванское солнце сильно припекает, созревает виноград... 31 августа 1924 г. Если ты решишься предпринять реальные шаги для приезда в Армению, будь то на время или навсегда, тебе во всем помогут... Приветы, которые ты записал в моем блокноте, я передаю...

28 сентября 1924. Дорогой Мартирос джан... Сердечно благодарен за твои письма, посланные из Берлина, Москвы и родного Еревана... С большой радостью прочел об открытии Ширакского канала. Это большое дело... Дорогой, благородный Мартирос, ты достаточно изучил мой характер, несдержанный, неуравновешенный, и должен извинить меня, ведь я в конце концов человек большой: быть очевидцем армянской трагедии и остаться здоровым — дело почти невозможное... 9 октября 1924 г. Мы живем по-прежнему, так же, как ты видел — один день радостный, четыре — печальных, скучных. Постараюсь обязательно вырваться в Ереван... 12 ноября 1924 г. Думаю приехать весной... В Армении все хорошо (газеты из Еревана читаю), одно только плохо — орфография. Постарайтесь ее изменить... Очень прошу книги для монастыря мхитаристов посылайте на мое имя, чтобы я прочел их первым.

18 декабря 1924. Мой дорогой Аветик... благодарю за полученные от тебя фотографии, каталог, венецианские альбомы... Мравян дал распоряжение директору Госиздата — прислать тебе учебник «Красное солнце». Степан Зорьян обещал послать свою «Ограду», В. Тотовенц — «Сегбос», а Дереник — «Храброго Назара» отдельной книжкой... Аветик джан, не будь в Ереване жилищной проблемы, я бы посоветовал тебе немедленно приезжать, по-

тому что кроме тебя все представители армянской интеллигенции находятся здесь. Конечно, место для тебя найдется, но я считаю, что пока этот вопрос хоть как-то не разрешится, тебе не следует приезжать: в твоём возрасте жить по-студенчески будет трудно...

...Часто вспоминаю нашу жизнь в Венеции, чудеса итальянского искусства, божественную эпоху Ренессанса и думаю о серости, царящей в наши дни в области искусства...

18 декабря 1924 г. Дорогой Мартирос... Дней десять назад познакомился с немецким художником Застнером... Я заговорил о твоих картинах, он отозвался о них с большой похвалой и сказал, что если в Армении есть такое солнце и краски, такие горы — значит это очень красивая страна... Мы живы-здоровы, я работаю, хочу закончить роман и приехать в Армению; об этом я писал, но ответа пока нет... Если в этом году (1925) мне не удастся приехать в Армению, в Ереван, то поеду в Испанию, а если и в 1926 не удастся, вообще не приеду, куплю земельный участок для могилы и буду ждать смертного часа... Письмо мое, наверное, получишь в новом году. Так что поздравляю... Дай бог, как говорится, в новом году увидеться на родной земле.

2 февраля 1925. Дорогой Аветик... Как ты знаешь, жизнь у нас идет вперед быстрыми темпами, для человека работающего дел очень много, правда, удобств маловато, в Ереване жить с комфортом невозможно, вот поэтому-то по новому проекту Еревана, сделанного А. Таманяном, с весны начнется строительство новых зданий, естественно, со всеми удобствами, во всяком случае они будут более красивы и благоустроены, чем все те, которые армянская буржуазия понастроила в Тифлисе, Баку, Армавире, Ростове и других городах за пределами Армении...

22 апреля 1925. Дорогой Мартирос... Уже давно я получил твое письмо, но прости, дорогой, что до сих пор не ответил тебе. Грустно мне очень, тяжело, сердце разбито: так прошла жизнь нашего поколения. Наконец, сегодня пишу тебе... Ереван уже расцвел, наверное, поспела черешня, и Араратская долина покрылась зеленью, с гор несутся бурные весенние воды, а Александра Мясникяна уже нет в живых... С самым искренним чувством скорблю об этой потере... Жаль, безмерно жаль. Какую короткую жизнь он прожил и какое большое дело совершил! Чувствую личную боль, что, вернувшись в Армению, не буду иметь счастья увидеть его...

Дорогой Мартирос, в марте здесь был Е. Чаренц, все дни проводили вместе, спорили очень редко, крепко сдружались. Я в нем увидел хорошего парня, дружелюбного, сердечного... Прочитал его стихи первого периода, красивые вещи, он талантлив... Не по возрасту развит, начитан и любит читать, далеко пойдет.


22 апреля 1925. * Мой дорогой Аветик! Трагическая весть об Ал. Мартуни (Мясникяне), конечно, дошла до тебя. Это очень большая потеря для Советской Армении и для Закавказья... Конечно, жизнь идет вперед, новые люди придут на смену, но потеря очень велика и невозполнима...

Утешительно то, что страна возрождается, что трудолюбивый и жизнестойкий армянский народ охвачен единым порывом — строить, вот поэтому не надо грустить...

26 мая 1925. Мой дорогой Мартирос... Я здоров, но мне тоскливо. Какая может быть жизнь у армянина на чужбине — одно прозябание... Я слышал, что в этом году с урожаем у нас на родине плохо, замерзли посевы и сады, голода бы не было, не дай бог...

25 июня 1925. Дорогой Аветик! Посылаю тебе вышедший на днях последний номер журнала «Норк», который довольно-таки содержателен и интересен. Между прочим, там есть и мое литературное сочинение. Для тебя, может быть, не новость мои писания, но все-таки...

* Поэт и художник в один день откликнулись на трагическую смерть Ал. Мясникяна.



Մ. Մարյան. Ավ. Իսահակյան. 1953 թ. Մ. Մարյանի թանգարան
М. Сарьян. Ав. Исаакян. 1953 г. Музей М. Сарьяна

28 июля 1925. Дорогой Мартирос! Прочел твою статью, благодарю за посвященные мне строки. Прочел с удовольствием...

Прочел отрывок из «Храброго Назара» и был восхищен, прекрасная вещь. Да здравствует Дереник! С радостью узнал о твоём московском успехе... Ты пишешь, что в будущем году придешь в Италию, живы будем — снова увидимся... Всегда вспоминаю тебя... А в будущем году вернусь с тобой в Ереван, больше не в силах ждать, надоело жить на чужбине.

Наши Варпеты, впитавшие в себя соки родной земли, не мыслили свое существование вне отчизны, и кроме ее «горестей и радостей» иных не было у них. Одно из свидетельств того следующее обстоятельство. Сарьян, который мог в любом уголке земного шара найти мотивы для своих картин, прожив полтора года в столице Франции, написал здесь всего несколько этюдов. Он, как и поэт-скиталец Исаакян, продолжал воспевать красоту родной природы, создав целую серию пейзажей. Остается лишь сожалеть, что картины эти сгорели во время пожара при перевозке их на пароходе.

Осенью 1926 года, когда Исаакян приезжает в Ереван, Сарьян находится в Париже. Весной 1928-го друзья встречаются на родной земле. И с этого времени начинается создаваться исаакяновский цикл Сарьяна, который занимает значительное место в творчестве художника.

В этом альбоме помещены два прекрасных пейзажа Сарьяна. Один из них «Арагац» (на обложке). Эта картина — обобщенный образ Армении, «открывающейся под солнцем сказки»; она раскрывает и источник творческого вдохновения поэта — Ширакскую долину. Второй пейзаж — «В горах Армении» — также проникнут духом исаакьяновской поэзии:

Косули в сумрак пронеслись
По острой горной крутизне.
На озеро взглянули вниз,
Взглянув, исчезли в тишине.*

С картиной Сарьяна «В горах Армении» любители искусства знакомятся впервые. Написанную в Париже эту работу автор подарил одному из своих друзей, а сейчас она находится в Нью-Йорке.

В 1929 году создается один из лучших образцов графического искусства Сарьяна — обложка сборника стихотворений Исаакяна. Сквозь ветви склонившихся друг к другу ив виднеется залитый светом Арагац. На склоне горы поля, старинная церковь, деревушка. Армения — страна поэта и художника — воплощена здесь в своей величественной красоте и девственной чистоте.

Друзья вновь встречаются 31 декабря 1929 года, 1 и 3 января 1930-го. Армянский народ отмечал 10-ую годовщину своего возрождения. Именно в этот период рождаются ныне широко известные три портретных рисунка поэта, которые в последующие годы часто публикуются в печати и в сборниках Исаакяна.

За год до окончательного возвращения Исаакяна на родину, в 1935 году Сарьян иллюстрирует его знаменитую «Абул-Ала-Маари». До нас дошли лишь три листа из этого оформления. Музей М. Сарьяна недавно приобрел их в Тбилиси. Эти иллюстрации отличаются характерными для творчества художника контрастными сочетаниями цвета, акцентирующими яркую световую атмосферу.

В 1940 году Сарьян создает известный портрет великого поэта, выполненный маслом. В том же году, по свидетельству Лусик Сарьян, художник исполняет более двух десятков иллюстраций для издаваемого в Москве сборника Исаакяна. В 1941 году они сдаются в Государственное издательство. Однако из-за начавшейся войны сборник не вышел в свет, а иллюстрации, как впоследствии выяснилось, пропали.

После 1950 года встречи и беседы Варпетов, чей возраст перевалил за седьмой десяток, становятся еще более сердечными. Они часто встречаются у себя дома, у Туманянов, в Академии наук, на различных собраниях. Поэт всегда был в поле зрения художника. Сарьян, никогда не расстававшийся с альбомом, выполняет много набросков. Рисуя Исаакяна, художник словно «беседует» с ним. Альбом познакомит читателей с некоторой частью этих набросков.

Поэт, в свою очередь, по разным поводам заносил в записную книжку свои заметки о Сарьяне: «Он самобытный, великий художник. Его кисть способна представить Армению, душу этого эпического, библейского края. Благодаря ему чувствуешь божественную красоту нашей страны, ее гор, земли, людей...», «Когда бываешь в другой стране, чтобы правдиво ее описать, необходимо понять ее, прочувствовать... Сарьян, например, чувствует Армению и создает пережитые, прочувственные пейзажи»; «Родина... В картинах Сарьяна доминирует образ Армении», «как бы ни был печален человек, глядя на полотна Мартироса Сарьяна, на его пламенеющие краски, — радуется».

* Перевод С. Шервинского.



Մ. Սարյան. Ավ. Իսահակյան. 1953. Մ. Սարյանի թանգարան
М. Сарьян. Ав. Исаакян. 1953. Музей М. Сарьяна

В 1955 году армянский народ отмечал юбилейные даты своих Варпетов: 80-летие Ав. Исаакяна и 75-летие М. Сарьяна. Поэт пишет о художнике статью: «Сарьян принадлежит всему миру», а художник о поэте — «Вечно с народом». В день рождения Исаакяна, с целью сделать подарок, Сарьян со своими двумя уже законченными картинами и этюдником отправляется к нему. По этому поводу художник рассказывал: «Собралось много людей. Там была и киносьемочная группа. Аветик упорно не хотел сниматься, отвернулся и сидел не двигаясь, замкнувшись в себе. В этой же позе я и написал его».

В 1957-ом, в год смерти Исаакяна, Сарьян создает еще один портрет великого поэта, которого он называл «одним из уникальных шедевров природы». Этот портрет, написанный акварелью, проникнут тонким чувством цвета и интимным настроением. А в феврале 1962 года, в день своего рождения, художник получает от семьи Исаакяна подарок — альбом для рисования, который поэт некогда приобрел для него. На первой странице альбома Сарьян написал: «Постараюсь заполнить эту тетрадь рисунками, посвящая их светлой памяти Аветика». На следующей странице Сарьян по памяти рисует Исаакяна: задумчивый взгляд поэта устремлен на родные горы...

Сейчас наших Варпетов нет в живых. Они оставили нам в наследство свое глубоко патристическое искусство и письма — отголоски большой дружбы двух великих граждан своей страны, той дружбы, которая и поныне является примером взаимной любви, уважения и высокого человеколюбия.

ШАЭН ХАЧАТРЯН.



Մ. ՍԱՐՅԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՐԵՐՈՒՄ, 1927
կտ., յուղ., 36 × 51 սմ. Ն. Գարսոյանի հավաքածու, Նյու-Յորք


М. САРЬЯН. В ГОРАХ АРМЕНИИ, 1927
холст, масло, 36 × 51 см. Собрание Н. Гарсоян. Нью-Йорк

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ




Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՇԱՊԻԿԸ,
1929. Սովարաթուղթ, ջրաներկ, տուշ, 26 × 19 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. ОБЛОЖКА СБОРНИКА СТИХОТВОРЕНИЙ АВ. ИСААКЯНА, 1929
Картон, акварель, тушь. 26 × 19 см. Музей Мартироса Сарьяна




Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ, 1929.31.12.
թուղթ, մատիտ, 27 × 20 սմ. Տեղը անհայտ է

Մ. ՍԱՐՅԱՆ. ՊՈՐՏՐԵՏ ԱՎԵՏԻԿԱ ԻՍԱԱԿՅԱՆԱ, 1929.31.12
Բուրադա, քարանդաշ. 27 × 20 սմ. Մեսոնադաճադադա ռաիզմեսոնա




Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱԸ, 1930.1.1.
թուղթ, ածխամատիտ, 27 × 20 սմ. Ավ. Իսահակյանի տուն-թանգարան

М. САРЬЯН. ПОРТРЕТ АВЕТИКА ИСААКЯНА, 1930.1.1
Бумага, уголь. 27 × 20 см. Дом-музей Аветика Исаакяна



Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ, 1930.3.1.
թուղթ, ածխամատիտ, 27 × 20 սմ. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

М. САРЬЯН. ПОРТРЕТ АВЕТИКА ИСААКЯНА, 1930.3.1
Бумага, уголь. 27 × 20 см. Музей литературы и искусства им. Е. Чаренца



Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ-ՄԱՀԱՐԻ» ՊՈԵՄԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ, 1935
թուղթ, գուաշ, 18 × 11 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. ИЛЛЮСТРАЦИЯ К ПОЭМЕ АВ. ИСААКЯНА «АБУЛ-АЛА-МААРИ», 1935
Бумага, гуашь. 18 × 11 см. Музей Мартироса Сарьяна



Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ-ՄԱՀԱՐԻ» ՊՈԵՄԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ, 1935
թուղթ, գուաշ, 18 × 11 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. ИЛЛЮСТРАЦИЯ К ПОЭМЕ АВ. ИСААКЯНА «АБУЛ-АЛА-МААРИ», 1935
Бумага, гуашь. 18 × 11 см. Музей Мартироса Сарьяна



Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ-ՄԱՀԱՐԻ» ՊՈԵՄԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ, 1935
թուղթ, գուաշ, 18 × 11 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. ИЛЛЮСТРАЦИЯ К ПОЭМЕ АВ. ИСААКЯНА «АБУЛ-АЛА-МААРИ», 1935
Бумага, гуашь. 18 × 11 см. Музей Мартироса Сарьяна



Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ, 1940
կտավ, յուղաներկ, 89 × 89 սմ. Հայաստանի պետական պատկերասրահ

М. САРЬЯН. ПОРТРЕТ АВЕТИКА ИСААКЯНА, 1940
Холст, масло. 89 × 89 см. Государственная картинная галерея Армении




Մ. ՍԱՐՅԱՆ. Դ. ԴԵՄԻՐՉՅԱՆ, ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ, Վ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ, 1955
թուղթ, մատիտ, 15 × 21 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան
М. САРЬЯН. Д. ДЕМИРЧЯН, АВ. ИСААКЯН, В. АМБАРЦУМЯН, 1955
Бумага, карандаш. 15 × 21 см. Музей Мартироса Сарьяна



Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱԱԿՅԱՆ. 1955
թուղթ, մատիտ, 15 × 21 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. АВ. ИСААКЯН. 1955
Бумага, карандаш. 15 × 21 см. Музей Мартироса Сарьяна




Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱԸՐ, 1955
կտավ, յուղաներկ, 46 × 38 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. ПОРТРЕТ АВ. ИСААКЯНА, 1955
Холст, масло. 46 × 38 см. Музей Мартироса Сарьяна



Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ, 1957
թուղթ, ջրաներկ, 21 × 14 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. ПОРТРЕТ АВ. ИСААКЯНА, 1957
Бумага, акварель. 21 × 14 см. Музей Мартироса Сарьяна




Մ. ՍԱՐՅԱՆ. ԻՍԱԱԿՅԱՆԸ ՄՏԵՐԻՄՆԵՐԻ ՀԵՏ ԸՆԹԵՐՑԵԼԻՄ. 1957
թուղթ, մատիտ, 28 × 20 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. ИСААКЯН С ДРУЗЬЯМИ ЗА ЧТЕНИЕМ. 1957
Бумага, карандаш. 28 × 20 см. Музей Мартироса Сарьяна



Մ. ՍԱՐՅԱՆ. ԻՍԱՀԱՎՅԱՆԸ ՄՏԵՐԻՄՆԵՐԻ ՀԵՏ. 1957
թուղթ, մատիտ, 15 × 21 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. ИСААКЯН С ДРУЗЬЯМИ. 1957
Бумага, карандаш. 15 × 21 см. Музей Мартироса Сарьяна



Մ. ՍԱՐՅԱՆ. ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ (հետմահու). 1962
թուղթ, գուն. մատիտ, 23 × 29 սմ. Մարտիրոս Սարյանի թանգարան

М. САРЬЯН. АВ. ИСААКЯН (посмертно). 1962
Бумага, цветной карандаш. 23 × 29 см. Музей Мартироса Сарьяна

Կինր 1 և. 15 կ.
Цена р. 15 к.

75 AP2
U 28

U $\frac{70103(1074)}{701(10)75}$ 29, 75 „S“

© «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1975
Издательство «Айастан», Ереван, 1975.

16 բացիկների հավաքածու: Կազմող՝ Շ. Գ. Խաչատրյան, խմբագիրներ՝ Վլ. Լ. Վարդանյան, Լ. Գ. Մելքոնովա, նկարիչ և գեղ. խմբագիր՝ Օգ. Ա. Ասատրյան, տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան, սրբագրիչներ՝ Ա. Գ. Կարապետյան, Ի. Գ. Եղիազարովա: Հանձնված է շարվածքի 11/V 1975 թ., ստորագրված է տպագրության 5/IX 1975 թ.: Պատվեր 748: ՎՖ 08499: Տպաքանակ՝ 20.000: № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:

Комплект 16 открыток. Составитель Ш. Г. Хачатрян, тираж 20.000. Типография № 1, Ереван, ул. Алавердяна 65.